**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**գ. Շինուհայր** **29 հունիսի 2018թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N15-Ա հրամանի, 2018 թվականի հունվարի 25-ի N01/17.1/426-18 հանձնարարականի և 2018 թվականի փետրվարի 2-ի N01/17.1/606-18 համաձայնության, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի N12-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2018 թվականի հունիսի 25-29-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 16 բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն:

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 16 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2018 թվականի հունիսի 25-29-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5. N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ 20 էջից բաղկացած կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Տաթև համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Տաթև համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի համայնքի ղեկավար՝**

**Մ.Սիմոնյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2018 թվականի հունիսի 29-ի N1 արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 16 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N17 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2018 թվականի հունիսի 29-ը, իսկ առանձին դրույթների մասով՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման օրից՝ 2016 թվականի փետրվարի 26-ից մինչև հսկողության սկսման պահը)

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| **Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում** | | | | |
| 06. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ [կ]ամավոր լիազորությունների իրականացման [կ]արգի և անհրաժեշտ ֆինանսական [մ]իջոցների վերաբերյալ որոշման առկայություն: | Չի պահպանված | Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշում ընդունելու պահանջը գործել է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրված տարբերակի 2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու կապակցությամբ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանվում են համայնքի ավագանու որոշմամբ և նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով: Օրենքի նոր խմբագրված տարբերակի պահանջները չեն պահպանված: | Առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի կամավոր խնդիրները, սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը, սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանել համայնքի ավագանու որոշմամբ: | 20 օր |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.20. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Չի պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Տաթև բնակավայրը ունի քաղաքաշինական կանոնադրություն՝ համաձայն<br>ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշման, իսկ մյուս 7 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա որոշման համաձայն, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որի շրջանակներում նաև Տաթև համայնքն է: | Առաջարկվում է հետևել նշված փաստաթղթերի մշակմանը և ապահովել դրույթի կատարումը: | 20 օր |
| 1.26. Համայնքի ավագանու առնվազն երկու ամիսը մեկ անգամ կայացած նիստերի արձանագրությունների առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքի ավագանու նիստերը հիմնականում կայացել են սահմանված ժամկետներում, բացառությամբ 07/07/2017-ից մինչև 01/11/2017 ժամանակահատվածն ընկած հատվածը, երբ 2017 թվականի հուլիսի 7-ին կայացած նիստից հետո հաջորդ նիստը կայացել է 2017 թվականի նոյեմբերի 1-ին՝ 3 ամսից ավելի ժամկետ հետո: Աշխատակազմի քարտուղարի կողմից մարզպետարան չեն ներկայացվել 2018 թվականի մարտ և մայիս ամիսներին կայացած ավագանու որոշումները, խախտվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջները: | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները, աշխատակազմի քարտուղարին ենթակել կարգապահական տույժի: | Անհապաղ ներկայացնել ավահգանու որոշումները |
| 2.17. Քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար օրենքով սահմանված կարգով միջոցների ձեռնարկում: | Թերի է պահպանված | Թերի են քաղաքացիական պաշտպանության, աղետների ռիսկերի նվազեցման պլանային փաստաթղթերը: | Կազմել և սահմանված կարգով հաստատել քաղաքացիական պաշտպանության, աղետների ռիսկերի նվազեցման պլանային փաստաթղթերը | երկամսյա ժամկետ |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 2.22. օրենքով սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ իրականացնելու համար կատարված աշխատանքների առկայություն: | Թերի է պահպանված | Կազմակերպվել են միայն համայնքի զարգացման ծրագրի հանրային լսումներ: խախտվել է <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը: | Ապահովել կարևորագույն համայնքային փաստաթղթերի հանրային լսումներ | X |
| 2.24. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն: | Թերի է պահպանված | Խախտվել է <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, չեն պապիպանվել ժամկետները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները | X |
| 3.03. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքի զարգացման ծրագրի վերաբերյալ լսումներ կազմակերպվել, սակայն բյուջեի նախագծի մասով լսումներ չեն եղել, խախտվել է <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը: | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները | X |

| Նախատված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 3.04. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | թերի է պահպանված | Համյանքի բյուջեի կատարման 2-րդ եռամսյակի վերաբերյալ հաղորդումը բացակայում է,խախտվել է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետը՝ 1-ին և 3-րդ եռամսյակային հաղորդումների ժամկետների մասով : | Այսուհետ բացառել խախտումները | X |
| 3.08. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: | թերի է պահպանված | Հաշվապահական հաշվառման գործընթացում առկա են թերություններ: Համայնքի ֆոնդային բյուջեով կատարվել է 14576.9 հազար դրամ ծախս, որից 13861.9 հազար դրամը կատարվել է ծախսային հոդվածների շեղումներով: Համայնքի կողմից գործուղված աշխատողներին ներքին գործուղումների ծախսերի փոխհատուցման համար վճարված ճանապարհածախսերի և գիշերավարձերի հաշվարկման ընթացքում խախտվել են ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N2335 Ն որոշմամբ հաստատված սահմանաքանակները: Արդյունքում՝ համայնքի բյուջեից ավել վճարված գումարը կազմել է 199.0 հազար դրամ, որը ենթակա է վերականգնման: | համայնքի բյուջեից ավել վճարված 199.0 հազար դրամը ենթակա է վերականգնման: | 20 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել խախտումները վերացնելու ուղղությամբ: |
| 3.09. Օրենքով սահմանված ժամկետում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայությունը: | թերի է պահպանված | Համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատված է համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 27-ի N22-Ն որոշմամբ, պետք է հաստատվեր մինչև մարտի 20-ը,<br>խախտվել է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ կետը: | Այսուհետ բացառել խախտումները | X |
| 3.20. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշման պահանջների պահպանում: | Թերի է պահպանված | Կազմակերպված գնման ընթացակարգերում չեն պահպանվել գնումների մասին օրենսդրության դրույթները | Առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N527-Ն որոշման և լիազոր մարմնի կողմից ընդունված այլ իրավական ակտերի դրույթներով | Այսուհետ բացառել խախտումներ |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| | | **Քաղաքաշինություն** | | |
| 1.01. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Տաթև բնակավայրն ունի գլխավոր հատակագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշման, իսկ մնացած 6 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն<br>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Տաթև համայնքին | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին | 20 |
| 1.02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Տաթև բնակավայրն համաձայն ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N 1594-Ն որոշման ունի գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ, , իսկ մնացած 6 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայնՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին | 20 |
| 1.03. Գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա | Թերի է պահպանված | Պահպանված է Տաթև բնակավայրի համար:<br>համաձայն ՀՀ կառավարության 2007 թվական դեկտոմբերի 27-ի N1594-Ն որոշման, իսկ մնացած 6 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որի մեջ է նաև Տաթև համայնքը | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.06. Գլխավոր հատակագծի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն արտացոլված են գործող գլխավոր հատակագծի համապատասխան գծագրերում և բացատրագրում | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է<br>Տաթև բնակավայրը ունի գլխավոր հատակագիծ, համաձայն ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշման, իսկ մնացած 6 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որոնց մեջ է նաև Տաթև համայնքը: | Ապահովել համայնքում առկա էլեկտրային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին | 20 |
| 2.01. Համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում արտացոլված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի փոփոխությունները: | Թերի է պահպանված | Պահպանված է Տաթև բնակավայրի համար<br>Համաձայն տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի | Ապահովել տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի կատարումը | 20 |
| 3.01. Համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական անձնագրերը | Թերի է պահպանված | Պահպանված է Տաթև բնակավայրի համար<br>Համաձայն ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 802 որոշման 8,9,13 կետերի պահանջների | Ապահովել ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 802 որոշման 8,9,13 կետերի պահանջների կատարումը | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 3.09. Համայնքի գոտևորման նախագծի կազմում կամ առանձին փաստաթղթի տեսքով մշակված է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է միայն Տաթև բնակավայրը ունի ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշմա համաձայն կազմված քաղաքաշինական կանոնադրություն, իսկ մյուս 6 բնակավայրերը քաղաքաշինական կանոննադրություններ չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը: | | X |
| 3.10. Քաղաքաշինական կանոնադրության դրույթները չեն հակասում հաստատված ծրագրային փաստաթղթերի դրույթներին, ներդաշնակ են բնակավայրում պատմականորեն ձևավորված ճարտարապետական ոճին | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է միայն Տաթև բնակավայրը ունի ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշմա համաձայն կազմված քաղաքաշինական կանոնադրություն, իսկ մյուս 6 բնակավայրերը քաղաքաշինական կանոննադրություններ չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը: | | X |
| 3.11. Համայնքում իրականացվող նոր կառուցապատումը համահունչ է համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված դրույթներին | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է պահպանված է Տաթև բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության դրույթներին համաձայն ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N 1594-Ն որոշման, իսկ մնացած 6 բնակավայրերը չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը | Ապահովել ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N 1594-Ն և 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշումների պահանջները: | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 4.01. ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ները (ՃՀԱ) տրամադրվում են համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի դրույթներին համապատասխան | Թերի է պահպանված | Համայնքը բազմաբնակավայր է միայն Տաթև բնակավայրն ունի ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N1594-Ն որոշմա համաձայն կազմված քաղաքաշինական կանոնադրություն, իսկ մյուս 6 բնակավայրերը քաղաքաշինական կանոննադրություններ չունեն:<br>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը: | Ապահովել ՀՀ կառավարության 2007 թվական դեկտեմբերի 27-ի N 1594-Ն և 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշումների պահանջները: | 20 |
| 4.07. Պահպանվում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում ՀՀ կառավարության սահմանած կարգը | Պահպանված չէ | շին. թույլ N 1 13,04,2018թ շին. թույլ N 2 04,05,2018թ շին. թույլ N 3 05,05,2018թ մասով խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշումներով սահմանված կարգով:իրականացվող քաղաքաշինական գործունեությունը | Առաջարկվում է կասեցնել շին. թույլ N 1 13,04,2018թ շին. թույլ N 2 04,05,2018թ շին. թույլ N 3 05,05,2018թ և առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն ևՀայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշումների պահանջներով | 20 օր |
| 6.04. Պահպանվում են շինարարության թույլտվության տրամադրման ժամկետները /10 օր, 15 օր/, ըստ նախատեսվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի | Պահպանված չէ | շին. թույլտվություն N 4 20,10,2017թ , շին. թույլ N 1 13,04,2018թ, շին. թույլ. N 4 06,06,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի պահանջները շին. թույլտվություն N 4 20,10,2017թ մեջ ճիշտ չի նշվել օբյեկտի ռիսկային աստճանը, կատեգորիա, սխալ է նշվել փորձաքննության տեսակը, չի նշվել Տաթև համայնքի հետ նախագծի համաձայնեցման թվագրումը, տարին, ամիսը, ամսաթիվը,չի նշվել հողամասի գտնվելու վայրը, օբյեկտի հիմնական ցուցանիշները: | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 100-րդ կետի և Ձև N 2-3 ձևաթղթի պահանջները | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Պահպանված չէ | 2հն. թույլ N 4 20,10,2017թ 2հն. թույլ N 1 13,04,2018թ 2հն. թույլ. N 4 06,06,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | 20 |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | պահպանված չէ | 2հն. թույլ N 4 20,10,2017թ 2հն. թույլ N 1 13,04,2018թ 2հն. թույլ. N 4 06,06,2018թ մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | 20 |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Թերի է պահպանված | Առկա է ոչ բոլոր գերեզմանատների համար: | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: | 20 |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Թերի է պահպանված | Հաճախ տրամադրվում են առանց սահմանված չափերի պահպանման: | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: | 20 |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Գերեզմանատները մաքրվում են, սակայն բացակայում են ցուցանակները: | Տեղադրել անհրաժեշտ նյութերը: | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 11.04. Բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի սահմանումը (ՏԻՄ օրենք, 42-րդ հոդված, 1-ին մաս, կետ 21): | Չի պահպանված | Խախտվել են «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջները: | Սահմանել վճարների չափերը | 50 |
| **Հողօգտագործում** | | | | |
| 13. Հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթում ներառվում են օրենքով և սույն կարգով սահմանված՝ անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝<br>1) օտարման պայմանագրի նախագիծը.<br>2) օտարվող հողամասի հատակագծի նախագիծը.<br>3) քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված քաղաքաշինական, բնապահպանական և այլ բնույթի պահանջների և սահմանափակումների, ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների ամրագրմամբ, այդ թվում՝ հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը), շինարարության սկզբի և ավարտի ժամկետները: | թերի է պահպանված | հողաշինարարական գործում բացակայում է օտարման պայմանագրի նախագիծը և քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը | հողաշինարարական գործը լրացնել նշված փաստաթղթերով, բացառել նման թերությունների կրկնությունը հետագա գործառույթներում | 20 աշխատանքային օր |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ: | թերի է պահպանված | Խախտվել է ՀՀ կառավարության 23.10.2000թ. N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի <<կազմված հողային հաշվեկշիռը համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ>> դրույթը | Տաթև համայնքի առ 01.07.2017թ. Կազմված հողային հաշվեկշիռը ներկայացնել ավագանու համաձայնեցմանը | 20 աշխատանքային օր |
| **Պաշտպանություն** | | | | |
| 07. Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների առկայություն: | թերի է պահպանված | Քաղաքացիական պաշտպանության ոլորտի ծրագրային փաստաթղթերը գտնվում են մշակման փուլում, սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից չեն հաստատվել: Խախտվել են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների պահանջները: | Սահմանված կարգով կազմել քաղաքացիական պաշտպանության ոլորտի ծրագրային փաստաթղթերը և համայնքի ղեկավարի որոշումներով հաստատել դրանք: | 20 աշխատանքային օր |
| 13. ՏԻՄ-ի կազմում զորահավաքային մարմին ստեղծելու մասին որոշման առկայություն: | չի պահպանված | Տեղական ինքնակառավարման մարմնում զորահավաքային մարմին չի ստեղծվել, չեն կատարվել «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները: | Առաջարկվում է սահմանված կարգով ստեղծել զորահավաքային մարմին: | 20 աշխատանքային օր |
| 14. ՏԻՄ-ի կազմում զորահավաքային մարմնի կանոնադրության առկայություն: | չի պահպանված | Չեն կատարվել ՀՀ կառավարության 2002թ մայիսի 20-ի «Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N591 որոշման պահանջները | ՀՀ կառավարության 20.05.2002թ N591 որոշման համաձայն զորահավաքային մարմին ստեղծելուց հետո հաստատել մարմնի կանոնադրությունը: | 20 աշխատանքային օր |
| **Արտակարգ իրավիճակներ** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.01. Բնակչության տարահանման պլանավորում և կազմակերպում. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողովի, տարահանման հանձնաժողովի հաստատված կանոնադրության, տարահանման հանձնաժողովի կողմից մշակված տարահանման պլանի առկայություն: | չի պահպանված | Չեն կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման պահանջները: | ստեղծել տարահանման հանձնաժողով,մշակել տարահանման պլան, | 20 աշխատանքային օր |
| 1.02. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանի առկայություն: | չի պահպանված | Չեն կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշման պահանջները: | Մշակել պլանը | 20 աշխատանքային օր |
| 1.03. Բնակչության պատսպարման իրականացում. Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարման համար նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանի, պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությանը պատսպարելու նպատակով՝ պարզագույն թաքստոցների կառուցման համար համայնքի ղեկավարի կողմից հաստատված պլանի առկայություն: | թերի է պահպանված | Չեն կատարվել ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 28-ի N 592 որոշման պահանջները: | Պաշտպանական կառույցների մուտքի վրա կախել ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժական երթուղիների վրա՝ ցուցանշաններ: | 20 աշխատանքային օր |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 1.04. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն: | չի պահպանված | Չեն կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման պահանջները: | Մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը: | 20 աշխատանքային օր |
| 1.05. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: | չի պահպանված | | Ապահովել համապատասխան հայտերի ներկայացումը ԱԻՆ | |
| 2.01. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (ԱԻՆ ՓԾ) համապատասխան մարզային փրկարարական վարչության մեթոդական օգնությամբ մշակված՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ համապատասխան մարզային փրկարարական վարչության պետի հետ, սահմանամերձ գոտում գտնվող համայնքներինը՝ նաև համապատասխան զինվորական կայազորի պետի հետ համաձայնեցված, ՀՀ համայնքի ղեկավարի կողմից հաստատված, հունվարի 1-ի դրությամբ ճշտված ՀՀ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի, համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի առկայություն: | Թերի է պահպանված | Չի ապահովվել ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N633-Ն որոշման պահանջները: | Ճշգրտել, համաձայնեցնել և հաստատել պլանը | 20 աշխատանքային օր |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 3.01. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունների առկայություն.<br>1) կապի և ազդարարման,<br>2) ինժեներական,<br>3) բժշկական,<br>4) տրանսպորտային,<br>5) առևտրի և սննդի,<br>6) էներգետիկայի և լուսաքողարկման,<br>7) բույսերի և կենդանիների պաշտպանության,<br>8) հասարակական կարգի պահպանման,<br>9)նյութատեխնիկական մատակարարման,<br>10) կոմունալ-տեխնիկական՝ բնակչության հատուկ սպասարկումների. Քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների հաստատված կանոնադրությունների առկայություն: | Թերի է պահպանված | Թերի են կատարված ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշման պահանջները: | Ծառայությունները ճշգրտել և հաստատել համայնքի ղեկավարի որոշմամբ | 20 աշխատանքային օր |
| 3.02. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված քաղաքացիական պաշտպանության համայնքային կազմավորումների առկայություն (անհրաժեշտության դեպքում): | Թերի է պահպանված | Թերի են կատարված ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշման պահանջները: | Կազմավորումները ճշգրտել և հաստատել համայնքի ղեկավարի որոշմամբ | 20 աշխատանքային օր |
| 4.01. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն: | Պահպանված չէ | Թերի են կատարված ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման պահանջները: | Հայտ ներկայացնել համայնքի սեյսմիկ ռիսկի քարտեզ մշակելու համար | 20 աշխատանքային օր |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 4.02. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում: | Պահպանված չէ | Թերի են կատարված ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման պահանջները: | Համայնքի զարգացման ծրագրով ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները | 20 աշխատանքային օր |
| **Առևտրի և ծառայությունների բնագավառ** | | | | |
| 12. Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողը պարտավոր է ապահովել՝ 1) «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «դ» և «ե» կետերի պահանջների կատարումը. 2) ելնելով վաճառվող ապրանքների առանձնահատկություններից՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով վաճառքի թույլատրված ապրանքների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով | Չի պահպանված | Խախտվել է "Առևտրի և ծառայությունների" մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «դ» և «ե» կետերի պահանջների կատարումը | Առաջարկվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով կանոնավոր ստուգումներ և արդյունքների մասին կազմել համապատասխան արձանագրություններ, ինչպես նաև խախտումների մասին պատշաճ կերպով իրազեկել բացօթյա առևտրի օբյեկտներին և համատեղ աշխատանքով վերացնել խախտումները: | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 35. ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման և բացօթյա առևտուր կազմակերպելու համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն | Չի պահպանված | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը: Համայնքի տարածքում փաստացի գործող 6 հանրային սննդի օբյեկտները չունեն ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի իրացման թույլտվություն՝ համայնքապետի կողմից: Համայնքապետարանում պարզաբանում են, որ նշյալ օբյեկտները չեն դիմում իրացման թույլտվություն ստանալու համար՝ անգամ համայնքապետարանի հորդորներից հետո՝ բացատրելով, որ թվարկված արտադրանքի իրացում իրենց օբյեկտներում տեղի չի ունենում: Հիմքեր կան ենթադրելու, որ բացատրությունը չի համապատասխանում իրականությանը: | Առաջարկվում է համայնքապետարանի համապատասխան ստուգող հանձնաժողովի կողմից իրականացնել կանոնավոր ստուգումներ՝ փաստի իսկությունը պարզելու, արձանագրելու և դրանից բխող օրենքով նախատեսված միջոցառումներ ձեռնարկելու համար: Նախկինում այսօրինակ ստուգումները վկայող որևէ փաստաթղթային հիմք համայնքապետարանում առկա չէ, մեկնաբանությունները տրվել են բանավոր՝ զրույցի ընթացքում: | 20 |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 40. ՀՀ օրենքի համաձայն համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն | թերի է պահպանված | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջը: Համայնքի տարածքում գործում է 6 հանրային սննդի օբյեկտ, որից 2-ը չունեն համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություն: Համայնքի ղեկավարի կողմից 2017 թ-ի փետրվարի 1-ի N 04-Ա կարգադրության համաձայն համայնքում ձևավորվել է համայնքի տարածքում գործող հանրային սննդի, հեղուկ վառելիքի, կենցաղային ծառայությունների, գովազդային վահանակների առկայության փաստը արձանագրող և հաշվառող հանձնաժողով՝ բաղկացած 3 համայնքային ծառայողներից: Ստուգումների ընթացքում պարզվեց,որ կանոնավոր ստուգայցեր հանձնաժողովի կողմից չեն իրականացվում, առկա չեն արձանագրություններ կամ ստուգումները հավաստող այլ փաստաթղթեր: Թույլտվություն չունեցող նշյալ երկու հանրային սննդի օբյեկտներից մեկի առկայության փաստը արձանագրվեց մեր կատարած իրավական և մասնագիտական հսկողության ժամանակ: | Առաջարկվում է համայնքապետի կողմից արված կարգադրության հիման վրա փաստաթղթով գործող հանձնաժողովի միջոցով համայնքի տարածքում գործող հանրային սննդի, հեղուկ վառելիքի, կենցաղային ծառայությունների, գովազդային վահանակների առկայությունը ճշգրտելու համար կանոնավոր ժամանակացույցով աշխատանքային պլան ձևավորել, կատարել շրջայցեր. կազմել արձանագրություններ և տանել աշխատանք համայնքում գործող օբյեկտների հետ բացահայտված թերությունների շտկման համար: Այսպիսի շրջայցերի համար առաջարկվում է դիտարկել նվազագույնը եռամսյակային հաճախականության ժամանակացույց: | 20 |
| Կրթություն | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 01. Տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների և բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին հավաքագրված տվյալների առկայություն /ծննդյան վկայական, անձնագիր/: | Թերի է պահպանված | Թերություններով է կատարվել տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների հավաքագրումը, որոշ դեպքերում բացակայում են նախակրթարան հաճախող երեխաների ծննդյան վկայականները, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները: Առկա են ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011թ<br>1) 28 հուլիսի 870- Ն հրամանով նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթղթերը, ինչպես նաև երեխաների հրամանագրման հրամանագրքերը, հաստիքացուցակները, սակայն բացակայում են տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյանները. չեն պահպանվել 26.01.2007թ. <<ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին>> N 29-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ով ներկայացված պահանջները: | Ապահովել տվյալ տարածքում բնակության վայրի մասին տեղեկանքների հավաքագրումը, նախակրթարան հաճախող երեխաների ծննդյան վկայականները, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները: ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011թ<br>1) 28 հուլիսի 870- Ն հրամանով նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթղթերը, ինչպես նաև երեխաների հրամանագրման հրամանագրքերը, հաստիքացուցակները, ինչպես նաև տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյաններըհամապատասխանեցնել 26.01.2007թ. <<ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, Նորմատիվները հաստատելու մասին>> N 29-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ով ներկայացված պահանջներին: | Անհապաղ |
| 02. Հաստատության և ծնողի միջև կնքվող պայմանագրի հիման վրա հրամանագրված երեխաների ֆինանսավորման առկայություն: | Թերի է պահպանված | Ոչ պատշաճ է կատարվում մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողի /օրինական ներկայացուցչի/ միջև և հաստատության միջև կնքված և կողմերի կողմից ստորագրված պայմանագրերը: | Կարգավորել մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողի /օրինական ներկայացուցչի/ միջև և հաստատության միջև կնքված և կողմերի կողմից ստորագրված պայմանագրերը: | Անհապաղ |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 03. Ծրագրերի մշակում և իրականացում-համայնքի իրավիճակի վերլուծության, կարիքների ճշգրտման, համայնքի համախմբման, ծրագրի առաջարկի մշակման և ներկայացման, ծրագրի առաջարկման համար նախատեսված ներդրումների ապահովման վերաբերյալ փաստերի առկայություն: | Չի պահպանված է | Ծրագրերի մշակումը և իրականացումը համայնքի իրավիճակի վերլուծության, կարիքների ճշգրտման, համայնքի համախմբում, ծրագրերի առաջարկի մշակումը և ներկայացումը, ծրագրի առաջարկումը նախատեսված ներդրումների ապահովման ուղղությամբ կատարվում է ոչ լիարժեք: Շենքային պայմանները չեն համապատասխանում ներկայացվող սանիտարահիգիենիկ պայմաններին:<br>Լիարժեք չեն կատարվում համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման վերաբերյալ առաջարկների և ծրագրերի քննարկումը: | Ապահովել ծրագրերի մշակումը և իրականացումը համայնքի իրավիճակի վերլուծության, կարիքների ճշգրտման, համայնքի համախմբումը, ծրագրի առաջարկի մշակումը և ներկայացումը, ծրագրի առաջարկում նախատեսված ներդրումների ապահովումը:<br>Քննարկման ենթարկել և իրականացնել համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացման վերաբերյալ առաջարկները և ծրագրերը, առաջնորդվելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ: մարտի 30-ի N 257-Ն հրամանով ամրագրված «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»-ով: | Անհապաղ |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 04. Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրության, նշանակման և պաշտոնից ազատման ապահովում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան: | Չի պահպանված է | Սյունիքի մարզի Շինուհայրի նախադպրոցական հաստատություն, Հալիձոր գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն, Սյունիքի մարզի Հարժիսի համայնքի նախադպրոցական հաստատություն, Սյունիքի մարզի Խոտի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ-ների, ինչպես նաև Տաթևի նախադպրոցական հաստատության տնօրենների նշանակման դեպքում խախտվել է<br>ՀՀ կրթության եւ գիտության նախարարի<br>2011 թվականի ապրիլի 26-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԻՖԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ >> N416-Ն հրամանի 3-րդ կետով նախատեսված պահանջը, որի համաձայն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ: | Վերանայել նշված նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնում կատարված նշանակումները և այն համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: | Անհապաղ |
| **Մշակույթ** | | | | |
| 07. Տարածաշրջանին բնորոշ ազգային ավանդական արհեստագործության զարգացման ծրագրերի իրականացման աջակցում: | թերի է պահպանված | աջակցել շնորհալիներին, բացել արհեստների ուսուցման խմբակներ | հաշվառել համայնքի շնորհալիներին, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ | 20 աշխատանքային օր |
| 08. Արհեստագործական և ժողովրդական ինքնագործ խմբակների գործունեության աջակցում: | թերի է պահպանված | նյութատեխնիկական բազայի անհրաժեշտություն | ուշադրության կենտրոնում պահել շնորհալիներին | 20 աշխատանքային օր |
| 09. Ժողովրդական վարպետների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում, ոլորտի տարբեր ճյուղերի զարգացման խթանում: | թերի է պահպանված | նպաստավոր պայմանների կարգավորում | տրամադրել համապատասխան տարածքներ | 20 աշխատանքային օր |
| **Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 3. Հայաստանի Հանրապետության Նախագահի «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» մրցանակների համար անցկացվող համանուն ստուգատեսներին ներկայացնելու նպատակով համայնքներում նոր մարզական կառույցների և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների առկայություն: | թերի է պահպանված | մարզական կառույցների վերականգման խնդիր | տրամադրել տարածքներ, մարզագույք՝ առողջ ապրելակերպի համար ստեղծել նպաստավոր պայմաններ | 20 աշխատանքային օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել խախտումները վերացնելու ուղղությամբ |
| 4. Աջակցություն Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը (ընտանիքների մարզման համար մարզաբազաների տրամադրում, մրցույթի նախնական և եզրափակիչ փուլերին ընտանիքների փաստացի մասնակցությանն աջակցում): | թերի է պահպանված | խթանել սպորտի հանդեպ սերն ու հետաքրքրությունը | սպորտով հետաքրքրվող համայնքի բնակիչներին ցուցաբերել աջակցություն, կազմակերպել մրցումներ, լավագույններին խրախուսել, արժանացնել մրցանակների | 20 աշխատանքային օր |
| 5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինների ու հասարակական կազմակերպությունների աջակցությամբ ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքներ անցկացնելու և առողջ կենսակերպի քարոզչության վերաբերյալ փաստերի առկայություն: | թերի է պահպանված | մասնագետ-մարզիչների աշխատանքների ակտիվության և օժանդակության նպատակով տարվող աշխատանքներ | հրավիրել մարզի լավագույն մարզիկներին, կազմակերպել ամենամյա հանդիպումներ նրանց հետ, մշտական ուշադրության կենտրոնում պահել առողջ ապրելակերպին նպաստող միջոցառումները | 20 աշխատանքային օր |
| **Անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն** | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 | 7 |
| 2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզային և տեղական հակաանտնահամաճարակային հանձնաժողովների կազմի և հաստատված կանոնադրության հաստատում: | Պահպանված չէ | Խախտվել են «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 17-րդ և 7-րդ հոդվածի 2-րդ կետերը | Առաջարկվել է համայնքի ղեկավարին ստեղծել հանձնաժողով | 15 աշխատանքային օր |

Սույն հավելվածը 2 օրինակից է և բաղկացած է 20 էջից:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս. Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավար՝**

**Մ. Սիմոնյան**